

դարձած է ի կաթողիկէ հաւատս ձեռամբ մեր
 Հ. Յակոբ Մուրատեանի, կրտսերն ի չորից
 Հիմնադրաց մերոց, եւ Հ. Սահակ Տէր-Բարսե-
 ղեանի, կը գրէ ինձ Անտոնեան Միաբան Գեր.
 Հ. Իսահակ Ա. Սրապեան, առնելով Անտոնեանց
 Գիւանէն: Մովսէս Ա. ի մասին շատ մանրամասն
 կը գրէ Աւգերեան Եպիսկոպոս (էջ 86—92)
 զոր հոս կը համառօտեմ. «Գաղատիոյ Առաջ-
 նորդն կարապետ Եպիսկոպոս Զէյթունցի երբ
 1726 Փետր. 17ին ի Կ Պոլիս Էջմիածնի կա-
 թողիկոս օծուեցաւ, Գաղատացի Մովսէս Ա.
 Շիրինեանը, զոր հետը տարած էր Գաղա-
 տիայէն, Եպիսկոպոս ձեռնադրելէն ետեւ՝ Յու-
 նիս 26ի արքունի հրովարտակով՝ Գաղատիոյ
 Առաջնորդ զրկեց: Մովսէս Ա. գիտնական,
 քաղցրաբարոյ, քաջաքարող, ժողովրդասէր մէկն
 էր, եւ մտերիմ բարեկամ վրթանէս Ա.ին, որ
 կաթողիկեայ էր եւ յետոյ Կեսարիոյ Արքեպիս-
 կոպոս եղած (տես քիչ մը վար): Գաղատիա
 հասնելուն պէս ջանաց կաթողիկեայ եւ ոչ կա-
 թողիկեայ Հայերն իրարու հաշտ պահել. առա-
 ջիններուն առաջնորդ Տէր Սուքիաս քահանային
 հետ (որ Կ. Պոլսոյ Առաքելական Նուիրակին
 փոխանորդն էր) շատ սիրով վարուեցաւ, եւ
 կաթողիկեայք օրէ օր աճեցան: Տէր Սուքիաս
 Մովսէս Եպիսկոպոսին ձեռնադրել տուաւ Մայ-
 մուն օղլու տիրացու Պետրոսը, որ ուղղափառ էր
 եւ Երուսաղէմ ուսած. ձեռնադրութեան ատեն
 սովորական նշովքները չկարդացուեցան: Ասոր
 վրայ շատ եկեղեցականներ ուղղափառ եղան,